Երկրորդ ընթերցում
(Լրամշակված նախագիծ)

Կ-611-06.06.2023-ՊԻ-011

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «է» ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

	է) Հայաստանի Հանրապետություն վերադարձի վկայական տալու համար	20

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ը» ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «թ» ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

	թ) քաղաքացիական կացության ակտային գրանցումը վերականգնելու համար, ներառյալ՝ համապատասխան վկայական տալը	45

Հոդված 4. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ 8.1-ին կետով.

8.1.	Տեսակապի միջոցով մատուցվող ծառայություններ	
	ա) տեսակապի միջոցով դիմողի ինքնությունը պարզելով օտարերկրյա պետություններում վավերական՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր տրամադրելու (փոխանակելու) համար	90
	բ) տեսակապի միջոցով դիմողի ինքնությունը պարզելով օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի վավերականության ժամկետը երկարաձգելու համար	45
	գ) տեսակապի միջոցով դիմողի ինքնությունը պարզելով Հայաստանի Հանրապետություն վերադարձի վկայական տալու համար	45

Հոդված 5. Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասում «16 տարին լրանալուց հետո առաջին անգամ անձնագիր ստացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները եւ» բառերը հանել:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվանից մեկ ամիս հետո:

Առաջին ընթերցում

Կ-611-06.06.2023-ՊԻ-011/1

ՏԵՂԵԿԱՆՔ
ՓՈՓՈԽՎՈՂ ՀՈԴՎԱԾՆԵՐԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքի (այսուհետ՝ Օրենք) 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «է» ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

է) Հայաստանի Հանրապետություն վերադարձի վկայական տալու համար	20

Հոդված 2. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի «ը» ենթակետն ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 3. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ ~~մասի~~կետի «թ» ենթակետը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

թ) քաղաքացիական կացության ակտային գրանցումը վերականգնելու համար, ներառյալ՝ համապատասխան վկայական տալը	45

Հոդված 4. Օրենքի 15-րդ ~~հոդվածը~~հոդվածի 1-ին մասը լրացնել հետեւյալ բովանդակությամբ ~~10-րդ մասով~~
8.1-ին կետով

~~10~~8.1.	Տեսակապի միջոցով մատուցվող ծառայություններ	
	ա) տեսակապի միջոցով դիմողի ինքնությունը պարզելով օտարերկրյա պետություններում վավերական՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագիր տրամադրելու (փոխանակելու) համար	90
	բ) տեսակապի միջոցով դիմողի ինքնությունը պարզելով օտարերկրյա պետություններում Հայաստանի Հանրապետության քաղաքացու անձնագրի վավերականության ժամկետը երկարաձգելու համար	45
	գ) տեսակապի միջոցով դիմողի ինքնությունը պարզելով Հայաստանի Հանրապետություն վերադարձի վկայական տալու համար	45

Հոդված 5. Օրենքի 26-րդ հոդվածի 3-րդ մասում «16 տարին լրանալուց հետո առաջին անգամ անձնագիր ստացող Հայաստանի Հանրապետության քաղաքացիները եւ» բառերը հանել:

Հոդված 6. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման ~~օրվան հաջորդող տասներորդ օրը~~օրվանից մեկ ամիս հետո:

ԱՄՓՈՓԱԹԵՐԹ

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԸՆԹԵՐՑՄԱՄԲ ԸՆԴՈՒՆՎԱԾ «ՊԵՏԱԿԱՆ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» (Կ-611-06.06.2023-ՊԻ-011/1) ՕՐԵՆՔԻ ՆԱԽԱԳԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ԱՌԱՋԱՐԿՆԵՐԻ

№	Առաջարկության (փոփոխության, լրացման) հեղինակը	Հոդվածը, կետը, որին վերաբերում է առաջարկությունը	Առաջարկություն (փոփոխություն, լրացում)	Առաջարկության վերաբերյալ հեղինակի (հիմնական զեկուցողի) եզրակացությունը	Առաջարկություններն ընդունելու կամ մերժելու վերաբերյալ հանձնաժողովի որոշումը
1.	**Կառավարություն**	Նախագծի 1-ին, 2-րդ, 3-րդ, և 4-րդ հոդվածներ	Իրավական որոշակիություն ապահովելու և գործնականում հնարավոր տարընթերցումներից խուսափելու նպատակով առաջար- կում ենք օրենքի նախագծով սահմանված կարգավորումները համապատասխանեցնել «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի պահանջներին: Ըստ այդմ առաջարկում ենք նախագծի՝ 1) 1-ին և 2-րդ հոդվածներում «15-րդ հոդվածի 1-ին մասի» բառերից հետո լրացնել «1-ին կետի» բառերը, 2) 3-րդ հոդվածում՝ «15-րդ հոդվածի 4-րդ մասի» բառերը փոխարինել «15-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի» բառերով, 3) 4-րդ հոդվածում՝ «15-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդա- կությամբ 10-րդ մասով» բառերը փոխարինել «15-րդ հոդվածի 1-ին մասը լրացնել հետևյալ բովանդակությամբ 8.1-ին կետով» բառերով:	Ընդունվել է	Ընդունվել է:

2.	Կառավարություն	Նախագծի 6-րդ հոդված	Նախագծի 6-րդ հոդվածի «օրվան հաջորդող տասներորդ օրը» բառերն առաջարկում ենք փոխարինել «օրվանից մեկ ամիս հետո» բառերով՝ հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 23-րդ հոդվածի 2-րդ մասը, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտն ընդունելու իրավասություն ունեցող մարմինը պարտավոր է նախատեսել նորմատիվ իրավական ակտի ուժի մեջ մտնելու ավելի ուշ ողջամիտ ժամկետ, բացառությամբ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված նորմատիվ իրավական ակտերի, եթե ակտով սահմանվում են այնպիսի իրավակարգավորումներ, որոնց համար անհրաժեշտ է հիմնավոր ժամանակահատված, որը հնարավորություն կտա հասցեատիրոջը իր վարքագիծը համապատասխանեցնելու սահմանված պահանջներին, կամ սահմանված իրավակարգավորումները վատթարացնում են անձի իրավական վիճակը:	Ընդունվել է	Ընդունվել է: